Հայրապետ Մարգարյան

ԳԱԳԻԿ Ա ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր. Բագրատունյաց Հայաստան, Անիի թագավորություն, Գագիկ Ա Բագրատունի, միջազգային հարաբերություններ, արտաքին քաղաքականություն, X-XI դարեր:

Հայ պատմագրության մեջ Գագիկ Ա-ի (990-1017/1020) կառավարման շրջանը, ավանդաբար, համարվում է այն ժամանակահատվածը, երբ «Բագրատունյաց թագավորությունը հասավ իր հզորության և ծաղկման գագաթնակետին»[1]: Կամ՝ նշվում է, թե Գագիկ Ա-ի «գահակալման տարիներին Բագրատունյաց թագավորությունը թևակոխում է իր հզորության ու բարգավիճման բարձրագույն շրջափուլը»[2]: Այս գնահատականը փաստարկելու համար, սովորաբար, նշվում են Բագրատունի գահակալի կատարած տարածքային ձեռքբերումները, 1001 թ. Դավիթ Անհողինի ելույթը ճնշելու հանրահայտ դրվագը, ինչպես նաև եկեղեցաշինական գործունեությունը: Ստիպված ենք արձանագրել, որ ժամանակակից հետազոտողները, առանց համակողմանի քննության ենթարկելու X դարի վերջի-XI դարի սկզբի Հայաստանի ներքին ու արտաքին կացությունը, վերապատմում են մեր միջնադարյան պատմիչների վկայությունները: Այսօրինակ մոտեցումը մեր օրերում, իհարկե, դժվար է արդարացված և արդիական համարել: Առկա վիճակի անբավարար լինելն ավելի է ընդգծվում, եթե վերհիշենք այն փաստը, որ Գագիկ Ա-ի կառավարման երկրորդ շրջանը մնում է գրեթե անհայտության մեջ՝ Արիստակես Լաստիվերցու հաղորդումների հակիրճության և առավել քան ընդհանուր բնույթ կրելու պատճառով: Դրությունը չեն փրկում մանր ժամանակագրությունները, որոնք ընդամենը թույլ են տալիս Գագիկ Ա-ի մահվան նոր տարեթիվ առաջարկել ու ավանդական 1020 թ. փոխարեն արտահայտվել 1017 թ. օգտին[3], և վիմական արձանագրություններն ու հիշատակարանները: Հետևաբար՝ մնում է հետազոտության ոլորտ ներգրավել նաև ավելի ուշ ժամանակների հայկական սկզբնաղբյուրներ, որոնք պահպանել են իրական անցուդարձերի արձագանքներ, ուշադրություն դարձնել օտար հեղինակների վկայություններին և, վերջապես, մանրակրկիտ քննության ենթարկել միջազգային իրադրությունը՝ հասկանալու համար Անիի թագավորության ձեռնարկումների տրամաբանությունը:

Այսպես՝ դժվար չէ նկատել, որ Գագիկ Ա-ի օրոք ռազմաքաղաքական ակտիվություն չէր նշմարվում միայն արևմտյան ուղղությամբ, որտեղ հարաբերական կայունություն էր հաստատվել Կարուց տիրակալ Աբասի (984-1029) երկարատև կառավարման ժամանակաշրջանում Անիի և Կարսի թագավորությունների բախումները վերջնականապես դադարել էին: Մյուս կողմից՝ 949 թ. բյուզանդացիներին անցած Կարինը գրավելու որևէ մտադրություն Բագրատունիների կենտրոնական թագավորությունը ունենալ չէր կարող: Կարինը բյուզանդացիների առաջխաղացման գլխավոր հենտրոնը և դիրքերի ամրապնդման միջնաբերդն էր, որից հետագայում ձեռնարկվելու էին Բագրատունյաց Հայաստանի դեմ ուղղված տարբեր քայլեր[4]:

Հոդվածը ներկայացվել է 11.05.2019 թ., գրախոսվել է 21.05.2019 թ., ընդունվել է տպագրության 12.06.2019 թ.:

[1] Առաքելյան Բ., Բագրատունյաց թագավորությունը X դարի վերջին և XI դարի սկզբներին, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. III, Ե., 1976, էջ 134: Հմմտ. Վ. Վարդանյան, Բագրատունյաց թագավորության վերելքն ու հզորացումը,

[2] Վարդանյան Վ., Բագրատունյաց թագավորության վերելքն ու հզորացումը, «Հայոց պատմություն», հ. II, Ե., 2014, էջ 57:

[3] Տե՛ս Юзбашян К. Н., К хронологии правления Гагика I Багратуни // Античная древность и средние века. Вып. 10, Свердловск, 1973, с. 195-197:

[4] Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Կարին-Թեուդոպոլիսը պատմության և ավանդության մեջ, «Հոդվածների ժողովածու», Ե., 2003, էջ 213-214:

Փոխարենը Անիի թագավորության արտաքին քաղաքականության մեջ իրենց համարժեք արձագանքները պետք է գտնեին այն մարտահրավերները, որոնք պայմանավորված էին միջազգային ասպարեզում կատարված կարևոր տեղաշարժերով: Մասնավորապես Հարավային Հայաստանում 966 թ. Տարոնը կլանելուց հետո Բյուզանդական կայսրությունը շարունակում էր ամրապնդել իր դիրքերը: Դավիթ կյուրապաղատը 990-ական թթ. հետևողականորեն ձգտում էր փաստական վերահսկողություն հաստատել այն հայկական գավառների նկատմամբ, որոնք Վարդ Սկլերոսի ապստամբության ճնշումից հետո նրան էին տրվել Վասիլ Բ-ի (976-1025) հրամանով և հետագայում անցնելու էին կայսրությանը: Այսպիսով՝ Գագիկ Ա-ն զրկված էր Հարավային Հայաստանում հարձակողական քայլեր ձեռնարկելու հնարավորությունից: Անիի շահնշահը բոլոր հիմքերը ուներ զգուշանալու բյուզադացիների հեռահար քայլերից, ուստի 1001 թ. խուսափեց Վասիլ Բ-ի հետ անմիջական կապեր հաստատելուց և բյուզանդացիների հովանավորությունը ընդունելուց: Մասնավորապես՝ նա ոչ միայն նպատակադիր կերպով հրաժարվում էր բյուզանդական տիտղոսից, այլև սկզբունքորեն շեշտում էր վաղեմի հարաբերությունների առկայությունը Արաբական խալիֆայության հետ: Պատահական չէ, որ Գագիկաշեն եկեղեցուց հայտնաբերված քանդակում Բագրատունի թագավորը պատկերված է արաբական տարազով: Ընդ որում՝ արքան պատկերված է չալմայով, որն ընդգծել է նրա թագավորական դիրքը[1]: Անշուշտ, հակաբյուզանդական ուղղվածություն ուներ նաև 1001 թ. թագաժառանգ Հովհաննես Սմբատի գլխավորած արշավանքը, որի շնորհիվ Անիի թագավորությանը միացվեցին Ծաղկոտնը և Կոգովիտը: Այսպիսով՝ հարավից յուրօրինակ պատնեշ էր ստեղծվում բյուզանդացիների դեմ: Այնուամենայնիվ Գագիկ Ա-ն գերադասեց բախման մեջ չմտնել Բյուզանդիայի հետ և չմիացավ վրաց Բագրատունիների հակաբյուզանդական ձեռնարկումներին: Միաժամանակ նաև հայոց արքան այնպիսի արդյունավետ հակաքայլեր չէր ձեռնարկում, որոնք թույլ կտային կանխել Անիի թագավորության նշանավոր տոհմերի ու Բյուզանդիայի միջև կապերի հաստատումը, որոնց ակնհայտ դրսևորումը կայսրության շնորհած տիտղոսների տարածումն էր, օրինակ, Ապիրատյանների, Պահլավունիների տոհմերում[2]:

Բյուզանդիայի արևելյան քաղաքականության դրսևորումներից մեկի նկատմամբ ևս Գագիկ Ա-ն որոշակի վերաբերմունք պետք է ցուցաբերեր: X դարի վերջին տասնամյակում սրվեց պայքարը Վանա լճի արևմտյան ափին ընկած առևտրական քաղաքների համար: Դավիթ կյուրապաղատը փորձում էր վերահսկողություն հաստատել Մանազկերտի ու Խլաթի նկատմամբ, բայց հանդիպում էր Ատրպատականի Ռավադյան ամիրա Մամլանի բուռն հակազդեցությանը: Ռավադյանները, ինչպես և նրանց նախորդները՝ Սաջյանները և Սալարյանները, պատմական ասպարեզում հայտնվել էին այսպես կոչված «իրանական ինտերլյուդիայի» ժամանակաշրջանում, երբ տեղական տոհմերը ձգտում էին իրենց ենթարկել Կասպից ծովից արևմուտք ընկած շրջանները: Ռավադյանները մայրաքաղաք էին հռչակել Թավրիզը և ցանկանում էին տիրել Հյուսիս-արևմտյան Իրանի քաղաքներով անցնող ու Հայաստանով շարունակվող առևտրական ուղիներին: Եթե նրանց նախորդները ձգտում էին հաստատվել Դվինում ու Արաքսի հովտում՝ վերահսկելով հյուսիսային մայրուղին, ապա Մամլան Ռավադյանը հավակնություններ էր ներկայացնում նաև հարավային մայրուղու քաղաքների նկատմամբ: Ուշագրավ փաստ է, որ Գագիկ Ա-ն վճռորոշ մասնակցություն բերեց Մամլան ամիրայի դեմ ձեռնարկված երկու արշավանքներին, իրեն դրսևորելով որպես Դավիթ կյուրապաղատի հետևողական դաշնակից: Հարցն այն է, որ Ռավադյան ամիրայի երկրորդ, առավել վտանգավոր ներխուժման ժամանակ Դավիթ կյուրապաղատին օգնության չշտապեցին նույնիսկ բյուզանդացիների նկատմամբ ավելի զիջողամտորեն տրամադրված հայ ու վրացի տիրակալները: Թվում է, որ այս հարցում վճռորոշ դեր է կատարել հարավարևելյան ուղղությամբ Գագիկ Ա-ի վարած քաղաքականությունը: Հայտնի է, որ Ա-

[1] Գրիգորյան Դ., Գագիկ Ա Բագրատունու քանդակային պատկերի հանդերձանքի հարցի շուրջ, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2014, թ. 1, էջ 250-257:

[2] Տե՛ս Մաթևոսյան Կ., Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Ե., 2015, էջ 7-69, 104-112:

նիի տիրակալներից դեռևս Սմբատ Բ-ն (977-990) էր ձգտում վերականգնել վերահսկողությունը Դվինի նկատմամբ, բայց այդ հաջողվեց Գագիկ Ա-ին[1], իսկ նա, հավանաբար 990-992 թթ., Բագրատունիների տիրույթներին միացրեց նաև Վայոց ձորի իշխանությունը, Ճահուկը և Սյունիքի թագավորության մեջ մտնող այլ տարածքներ[2]: Այսպիսով՝ Արաքսի հովտով անցնող առևտրական մայրուղին կենսական նշանակություն էր ձեռք բերել Բագրատունյաց Հայաստանի համար: Արաքսի հովտի կարևորությունը գիտակցել են նախորդ գրեթե բոլոր Բագրատունի արքաները, առավել ևս այս հարցում անտարբեր լինել չէր կարող Գագիկ Ա-ն: Դավիթ կյուրապաղատին ռազմական օգնություն ցույց տալը կարելի է գնահատել որպես Ատրպատականի ամիրաների դեմ առճակատման մեջ մտնելու հերթական դրսևորում: Մամլանին հասցված զույգ հարվածների շնորհիվ թուլանում էր նաև Արաքսի հովտի նկատմամբ Ռավադյանների գործադրած ճնշումը:

Գագիկ Ա-ի կառավարման նախօրյակին սպառնալից իրադրություն էր ստեղծվել երկրի հյուսիս-արևելքում, որտեղից հայկական ու վրացական թագավորություններին սպառնում էր Գանձակի Շադդադյան ամիրայությունը: Փատլուն Ա-ի (985-1031) հարձակումներին, դեռևս Սմբատ Բ-ի օրոք, առաջին հերթին ենթարկվում էին Տաշիր-Ջորագետի Կյուրիկյանները, Կախեթի ու Հերեթի թագավորությունները: Առավել մեծ վտանգ սպառնում էր Փառիսոսի թագավորներին, որոնք դարձել էին Շադդադյանների անմիջական հարևանը: Գագիկ Ա-ն շարունակեց Անիի թագավորների ավանդական քաղաքականությունը և տիրացավ Վայոց ձորի, Խաչենի ու Փառիսոսի այն տարածքներին, որոնք ենթարկվում էին Գանձակի ամիրայության հարձակումներին: Նախօրոք հնազանդեցնելով Դավիթ Անհողինին, Գագիկ Ա-ն զսպեց նրա հավակնությունները դեպի արևելք ընկած տարածքների նկատմամբ: Երկու տարի անց՝ 1003 թ. Գագիկ Ա-ն Անիի թագավորությանը միացրեց Փառիսոսի թագավորության մի մասը: Պատմագիտության մեջ հայոց արքայի այդ քայլի իմաստը լիովին չի ըմբռնվել, հետևաբար և ճիշտ գնահատական չի ստացել: Այսպես՝ Բ. Առաքելյանի շարադրանքից՝ «Փառիսոսի փոքրիկ թագավորության հողերը իրենց մեջ բաժանեցին Գագիկ Ա և Գանձակի Փատլուն ամիրան»[3], այն տպավորությունը կարելի է ստանալ, թե Բագրատունիներն ու Շադդադյանները համագործակցել են թուլացած հայկական թագավորությունը կլանելու հարցում: Մինչդեռ Փատլուն Ա Շադդադյանի մասին Վարդան Արևելցու վկայությունը՝ «գոռ դնէ ընդ Գագկայ թագաւորին Ջորոյգետոյ, և ընդ Կիւիկէի թագաւորին Աղուանից և ընդ Բագարատայ թագաւորին Վրաց»[4], ճիշտ ընկալելու և «Գագկայ թագաւորին Ջորոյգետոյ»-ին Գագիկ Ա-ի հետ նույնանձնացելու պարագայում, պատկերը բոլորովին այլ է դառնում: Սմբատ Բ-ն և Գագիկ Ա-ն համառ պայքար են մղել՝ հայ տիրակալների տիրույթները գրավելու Շադդադյանների քաղաքականության դեմ: Ինչպես երևում է վրացական աղբյուրների տեղեկություններից, Գագիկ Ա-ն Շադդադյանների դեմ կռիվները հաջողությամբ շարունակել է նաև հաջորդ տասնամյակի ընթացքում՝ դաշնակցելով վրաց արքա Բագրատ Գ-ի (975-1014) հետ, ինչի մասին խոսվում էր նաև Վարդան Արևելցու վերոբերյալ վկայության մեջ:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ Գագիկ Ա-ի արտաքին քաղաքական ձեռնարկումների շնորհիվ Անիի թագավորության սահմանները զգալիորեն ընդարձակվել էին հյուսիսային, արևելյան և հարավային ուղղություններով: Կարելի է ենթադրել, որ Գագիկ Ա-ի կառավարման շրջանում էր ձևավորվել «Դրուց աշխարհը», որի մեջ մտնում էին սահմանաեզրին ընկած և թշնամիների ճնշմանը ենթարկվող շրջանները:

---

[1] Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Ե., 1965, էջ 177-182:

[2] Տե՛ս Հարությունյան Բ., Սյունիքը X-XI դարերում, «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 120:

[3] Առաքելյան Բ., նշվ. աշխ., էջ 138:

[4] Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862 (վերատպություն՝ Ե., 2001), էջ 105-106:

Պատահական չէ, որ հենց «Դրուց աշխարհը» հանձնվեց եռանդուն Աշոտ Դ-ին, երբ Գագիկ Ա-ի մահից հետո նա ավագ եղբոր հետ բաժանեց հայրական ժառանգությունը:

Айрапет Маргарян, ВНЕШНЯЯ ПОЛИТИКА ГАГИКА I БАГРАТУНИ. В период правления Гагика I Багратуни (990-1017/1020) внешнеполитическое положение Анийского королевства значительно укрепилось. Военные и внутриполитические успехи позволили Гагику I проводить самостоятельную внешнюю политику. Избегая конфронтации с Византией, он, тем не менее в 1001 г. решительно отверг попытку Василия II навязать свое покровительство.

Главным противником Багратидской Армении в этот период стали Раввадиды Атрпатакана и Шаддадиды Ганзака. В борьбе против них Гагик I выступал как сюзерен всех армянских правителей, при необходимости вступая в союз с грузинскими политическими образованиями.

Ключевые слова: Багратидская Армения, Анийское королевство, Гагик I Багратуни, международные отношения, внешняя политика, X-XI в.

Hayrapet Margaryan, FOREIGN POLICY OF GAGIK I BAGRATUNI. During the governance of Gagik I Bagratuni (990-1017/1020) the international position of the kingdom of Ani significantly strengthened. The military and internal success allowed Gagik I to pursue an independent foreign policy. Avoiding confrontation with the Byzantine Empire, nevertheless he firmly rejected the attempt of Vasil II to impose his patronage in 1001.

The main enemy of Armenia in this period were the Ravvadids of Atrpatakan and the Shaddadids of Ganzak. In the fight against them Gagik I acted as the overlord of all the Armenian rulers, in case of necessity creating alliances with the Georgian political entities.

Key words: Bagratid Armenia, the kingdom of Ani, Gagik I Bagratuni, international relations, foreign policy, X-XI centuries.